ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

27 հոկտեմբերի հինգշաբթի 2022
տպագրության ԺԱ տարի

153
(2633)

100 դրամ

քաղաք Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 27 ԻՑ 23 ՏԱՐԻ ԱՆՑ



2021 թվականի հունիսի 14-ին՝ արտահերթ խորհրդարանական ընտրությունների քարոզարշավի ժամանակ, ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը նշել էր. ««Հոկտեմբերի 27»-ի գործի նախաքննությունը բացված է, եւ Ազգային անվտանգության ծառայությունը վարում է այդ քննությունը: Բայց նաեւ ձեր քվեարկությամբ կարող եք առանձնահատուկ պարտավորություն եւ պատասխանատվություն դնել մեր դատահիրավական մարմինների վրա՝ ասելով, որ այդ գործերը պետք է ամենայն խորությամբ քննվեն, եւ բոլոր հնարավոր միջոցները գործադրվեն այդ գործը բացահայտելու համար»: Ի վերջո, ընտրողները տվեցին այդ քվեն: Այսօր 1999 թվականի «Հոկտեբերի 27»-ի պետական ահաբեկչության 23-րդ ողբերգական տարելիցն է, եւ չնայած 2018 թվականի հեղափոխությունից հետո քրեական գործը (այսուհետ՝ վարույթ) վերաբացվեց, սակայն 23 տարի անց գործը բացահայտված չէ: Եվ այսպես, «Ժողովուրդ» օրաթերթին ուժային կառույցների իր լավատեղյակ աղբյուրներից հայտնի դարձավ, որ վերաբացումից հետո՝ անցած տարի, քրեական գործով հարցաքննվել է ահաբեկչական խմբի ղեկավար Նաիրի Հունանյանը: Բացի նրանից, հարցաքննվել են նաեւ նրա եղբայրը՝ Կարեն Հունանյանը, ոճրագործության մյուս մասնակիցներ Դերենիկ Բեջանյանը, Աշոտ Կնյազյանը եւ ահաբեկչությանը զոհ դարձած ԱԺ փոխնախագահ Յուրի Բախշյանի այրին՝ Անահիտ Բախշյանը: Ի՞նչ ունենք վերաբացումից հետո. «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում ԱԺ նախկին պատգամավոր, կրթության տեսչական մարմնի կառավարման խորհրդի անդամ, Յուրի Բախշյանի այրի Անահիտ Բախշյանը հայտնեց, որ քրեական գործի վերաբացումից հետո իրեն երկու անգամ ԱԱԾ-ում հարցաքննության են հրավիրել, որից հետո որեւէ այլ բան չի արվել, եւ գործը բացահայտված չէ. «Ոչինչ չի արվել, ես տեղյակ չեմ, ինձ հայտնի չէ՝ ինչ է արվել: Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանը պարտավոր է խոսել այս մասին եւ պատասխանել իմ բաց նամակին: Ինքը պարտավոր է, քանի որ այդ որոշումը, անկախ, թե ինչ-ինչ յանն է գրել, դա ՀՀ -ի գլխավոր դատախազի ստորագրությունն է, կնիքը, եւ վերջ»:

Տիկին Բախշյանի գնահատմամբ՝ մինչ «Հոկտեմբերի 27» -ը բացահայտելը Նիկոլ Փաշինյանը, լինելով «Մարտի 1»-ի տուժող, ինքը պետք է շահագրգիռ լիներ «Մարտի 1»-ի բացահայտմամբ. «Վերսկսենք «Մարտի 1»- ից. ինքը, լինելով իրադարձությունների կենտրոնում գտնվող մարդ, պետք է շահագրգիռ լիներ՝ մարտի մեկը բացեր. չբացվեց: Ինչի՞ մասին է սա ասում. Հայաստանում չկա արդարադատություն, եւ այդ նշանակում է՝ իշխանության ամենակարեւոր թեւը՝ արդարադատությունը, չի գործում, չհեղափոխությունից հետո էլ չկա, եւ այդտեղից բխում են մեր բոլոր դժբախտությունները: «Մարտի 1»-ը պետք է բացահայտվեր, քանի որ դա շատ ավելի շատ ակնհայտ ու հեշտ էր, քան «Հոկտեմբերի 27»-ը, քանի որ «Հոկտեմբերի 27»-ի մեջ արտաքին խաղացողները շատ են: Մեղրիի միջանցքի մասին «Հոկտեմբերի 27»-ից առաջ խոսել են, եւ այսօր մենք այդ իրականության մեջ ենք, թե ինչպես են բացահայտ Ռուսաստան, Ադրբեջան, Թուրքիա պահանջում միջանցք, որին կատեգորիկ դեմ են եղել Կարեն Դեմիրճյանը եւ Վազգեն Սարգսյանը, անվտանգության խորհրդի նիստի ժամանակ դուռը շրխկացրել, դուրս են եկել:

Ի՞նչ է նշանակում՝ երկու տարի փող տանք, բայց զենք չստանանք:

Անձամբ ես իրեն ընտրել եմ որպես ժողովրդավարության տեսակետ ընկալող մարդու, բայց միշտ չէ, որ ինքը իր այդ սկզբունքներին հավատարիմ է մնացել»:

Այսպիսով, տիկին Բախշյանի խոսքով՝ բազմաթիվ հարցեր չունեն իրենց պատասխանները, եւ ամենակարեւորը՝ «Հոկտեմբերի 27»-ի իրական կազմակերպիչներն ու պատվիրատուները մինչ օրս բացահայտված չեն: «Ես կմեռնեմ, կգնամ, բայց այդ օրը չեմ տեսնի, որ բացահայտվի գործը»,- ասաց Անահիտ Բախշյանը:

Հայաստանի կառավարությունը կգործադրի բոլոր հնարավոր ջանքերը, որ Ադրբեջանի հետ խաղաղության պայմանագիրը ստորագրվի մինչեւ տարեվերջ: Երեկ այս մասին նշեց ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը ԱԺ-ում կառավարության անդամների հետ հարցուպատասխանին՝ անդրադառնալով ՔՊ-ից Լուսինե Բաղալյանի հարցին: «Անկեղծ պետք է ասեմ՝ ես ցանկանում եմ եւ կցանկանամ, որ այն կնքվի մինչեւ այս տարեվերջ: Ինչքանո՞վ է դա իրատեսական. ես այդ հարցին կպատասխանեմ հետեւյալ կերպ՝ ես եւ կառավարությունը բոլոր հնարավոր ջանքերը կգործադրենք, որ դա լինի իրատեսական: Մենք հույս ունենք, եւ դա կարեւոր նրբություն է, որ մինչեւ խաղաղության պայմանագրի ստորագրումը ավարտված լինեն դելիմիտացիայի աշխատանքները: Ինչքանո՞վ է դա իրատեսական. եթե հաշվի առնենք, որ Պրահայում մենք պայմանավորվածություն ենք ձեռք բերել, որ դա տեղի է ունենալու 1991 թվականի սահմանների հիման վրա, դա կարող է լինել իրատեսական, քանի որ այդ սահմանները, ըստ էության, հայտնի են»,-ասաց Փաշինյանը: Հիշեցնենք, որ սեպտեմբերի 14-ին խորհրդարանում Փաշինյանն ասել էր, թե պատրաստ է ստորագրել մի փաստաթուղթ, որը տեւական խաղաղություն եւ անվտանգություն կապահովի Հայաստանի համար 29,800 կմ քառակուսի տարածքում: Ժամեր անց հերքել էր իրեն. «Որեւէ փաստաթուղթ չի ստորագրվել եւ չի պատրաստվում ստորագրման: Սա տեղեկատվական դիվերսիա է՝ ուղղորդված արտաքին ոչ բարեկամական ուժերի կողմից, երկրի դիմադրողականությունը կոտրելու համար»,- գրել է վարչապետը: Եվ, ահա, մեկ ամիս անց էլ նա հայտարարեց, թե ամեն դեպքում խաղաղության պայմանագիր ստորագրվելու է: Ստացվում է՝ հերթական անգամ խաբել է ՀՀ հպարտ եւ արժանապատիվ քաղաքացիներին:

Ազգային ժողովի «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության ղեկավար Հայկ Կոնջորյանի «բիզնեսդասային» թռիչքը դուր չի եկել նաեւ իշխանական էլիտային: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ Ֆրանսիայից Հայաստան վերադարձող Կոնջորյանը ինքնաթիռի «Բիզնես» դասի հատվածում է նստած եղել, ինչը թե՛ գործադրի, թե՛ օրենսդրի անդամների համար քննարկման իրական ու լուրջ թեմա է դարձել: Մասնավորապես՝ իշխանականներին դուր չի եկել հանգամանքը, որ վարչապետ Նիկոլ Փաշինյանի տիկինը՝ Աննա Հակոբյանը՝ թիկնապահներով ու ուղեկցողներով մեկտեղ, «Էկոնոմ» դասում է նստել, Կոնջորյանը առոք-փառոք «Բիզնես» դասում է տեղավորվել: «ՔՊ-ականները Կոնջորյանին սաստել են անգամ, թե՝ ֆայմեիր, տեղդ տիկին Հակոբյանին զիջեիր. ի՞նչ պարտադիր էր՝ «Բիզնես» դասում նստեիր»,- ասաց «Ժողովուրդ» օրաթերթի մերձիշխանական աղբյուրը: Մեր տեղեկություններով՝ խորհրդարանի իշխանական խմբակցության ղեկավարի հետ այդ մասով սաստիչ խոսակցություն է ունեցել ԱԺ ղեկավարությունը: «Կոնջորյանին սաստիչ «մեսիջներ» են եկել նաեւ կառավարական կաբինետից՝ անձամբ Նիկոլ Փաշինյանի անունից»,- ասաց մեր զրուցակիցը: «Ժողովուրդ» օրաթերթը իր աղբյուրներից տեղեկացավ, որ Կոնջորյանն արդարացել է, թե ինքնաթիռի «վիփ» ավիատոմսն ավելի էժան՝ մոտ 400 հազար դրամ է եղել, իսկ էկոնոմը՝ 600 հազար դրամ, թեպետ միշտ լինում է ճիշտ հակառակը: Միջադեպի մասին «Ժողովուրդ» օրաթերթը փորձեց նաեւ Հայկ Կոնջորյանի մեկնաբանությունը լսել: Նրա օգնականին փոխանցեցինք, որ լուրն առանց Կոնջորյանի մեկնաբանության չէինք ցանկանա գրել: Օգնականն ասաց, որ մեր հարցխնդրանքը նրան կփոխանցի, Կոնջորյանը, սակայն, մեզ հետ այդպես էլ կապ չհաստատեց: Ի՞նչ է ստացվում. Հայաստանն այս օրերին պետականության ու ինքնիշխանության լուրջ մարտահրավերների առաջ է կանգնած, իսկ իշխանական «էլիտան» ինքնաթիռում յուղոտ տեղերում նստելու համար ինքն իր մեջ կռիվ է տալիս:



Ծովագյուղ գյուղի կառավարման հարցը լուծվել է, բայց ոչ ծովագյուղցիների սրտով: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ Ծովագյուղ համայնքի վարչական ներկայացուցիչ նշանակվել է Սեդա Մինասյանը, որը նախկինում աշխատել է գյուղապետարանի աշխատակազմում: Տեղեկացնենք, որ մինչ այս Ծովագյուղի գյուղապետարանի գործունեությունը պարալիզացված էր. Ծովագյուղը վարչական ներկայացուցիչ չուներ: Նախկին համայնքապետ Վահրամ Գեւորգյանը չէր ցանկանում նշանակվել որպես վարչական ներկայացուցիչ, նա եւ իր համագյուղացիները պահանջում էին Ծովագյուղին չխոշորացնել: Նշենք, որ անորոշ կարգավիճակում էր ոչ միայն Ծովագյուղը, այլեւ Սեմյոնովկա համայնքը: Սեմյոնովկայի վարչական ներկայացուցիչ նշանակվել է նախկին գյուղապետ Դավիթ Մնացականյանը: Հիշեցնենք՝ «Վարչատարածքային բաժանման մասին» օրենքի փոփոխությունների համաձայն՝ նախորդ տարվա դեկտեմբերի 5-ի ընտրություններից հետո Սեւանին միացան տասը գյուղեր, այդ թվում՝ Ծովագյուղն ու Սեմյոնովկան: Այս գյուղերի բնակիչները մեկ մարդու նման չէին մասնակցել ՏԻՄ ընտրություններին, քանի որ դեմ էին համայնքների միացմանը, խոշորացմանը: Սեմյոնովկայի եւ Ծովագյուղի բնակիչները ցանկանում էին միավորվել իրար, այլ ոչ թե Սեւան համայնքին, բայց, արի ու տես, կառավարությունն այս հարցում հաղթեց ծովագյուղցիներին:

ԱՆՎՏԱՆԳԱՅԻՆ ՀԱՐՑԵՐ

ՀԱՄՑԵԱԿԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ՝ ՀԱՊԿ-ՈՒՄ

Ռուսաստանի հյուսիսային մայրաքաղաքում՝ Պետերբուրգում, ՀԱՊԿ անդամ պետությունների խորհրդարանների խորհրդակցության ընթացքում՝ օրերս, ՀՀ Ազգային ժողովի «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր, խորհրդարանի պաշտպանության եւ անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովի փոխնախագահ Արմեն Խաչատրյանը հայտարարել է՝ անցած մեկ տարվա ընթացքում ադրբեջանական զինուժը գրավել է Հայաստանի մոտ 127 քառակուսի կիլոմետր տարածք:

Խաչատրյանն, ի դեպ, ՀՀ պաշտոնյաներից առաջին պաշտոնյան է, որ հրապարակել է այս թիվը: Մինչեւ նա, նշենք, վարչապետը տեղեկացրել էր, որ սեպտեմբերի 13-ի հարձակման հետեւանքով Ադրբեջանը 10 քառակուսի կիլոմետր է օկուպացրել, իսկ 2021-ին՝ 41:

Սեպտեմբերյան մարտերից մեկուկես ամիս անց Պաշտպանության նախարարությունը շարունակում է լռել եւ չպարզաբանել, թե սեպտեմբերին քանի դիրք է անցել ադրբեջանական զինուժի հսկողության տակ, որտեղ են տեղակայված դրանք, ռազմավարական ինչ նշանակություն ունեն, մինչդեռ սեպտեմբերյան հարձակումից մեկ շաբաթ անց Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւը հայտարարել էր, թե հայ-ադրբեջանական սահմանագծում՝ Մռավի սարերից մինչեւ Արաքս, իրենք դիրքային առավելություն ունեն: «Ժողովուրդ» օրաթերթը Խաչատրյանի՝ Պետերբուրգում հնչեցրած հայտարարությունը ԱԺ ՔՊ-ական մեկ այլ պատգամավորի՝ Հովիկ Աղազարյանի հետ քննարկեց:

-ՀԱՊԿ-ում ինչած հայտարարությունից ի՞նչ ենթադրենք. սա պարզապես հայտարարությո՞ւն է, թե՞ որոշակի գործողություններ, այնուամենայնիվ, կլինեն:

-Սա, իհարկե, պարզապես հայտարարություն չէ, հստակ, հասցեական հայտարարություն է, ինչին պետք է հաջորդի գործընթացի հաջորդ փուլը, այն է՝ ՀԱՊԿ-ը ինչ գործիքակազմ պետք է օգտագործի, որ Ադրբեջանն իր զորքերը դուրս բերի Հայաստանի սուվերեն տարածքներից:

-Բայց ինչպե՞ս՝ բանակցություններո՞վ, ռազմական գործողություններո՞վ...

-Ռազմական գործողությունը որպես ամենավերջին տարբերակ եմ քննարկում, եթե, իհարկե, դրա անհրաժեշտությունն առաջանա: Կարծում եմ՝ կա հնարավորություն, որ բանակցությունների միջոցով լուծվի այդ հարցը, ու հակառակորդը դուրս գա մեր տարածքներից: Առաջիկայում մենք պետք է սահմանագծման ու սահմանազատման խնդրին առնչվենք, հետեւաբար հենց այդ կոնտեքստում էլ, որպես գործընթացի առաջին քայլ, պետք է ադրբեջանական զորքերը դուրս գան ՀՀ սուվերեն տարածքից:

-Այսինքն՝ ադրբեջանական զորքերը դուրս գան ՀՀ տարածքից, հետո նո՞ր երկխոսենք նրանց հետ:

-Կարծում եմ, այո, կարող ենք նման պահանջ դնել, հետո նոր երկխոսություն սկսենք, բայց կարող է, օրինակ, Ռուսաստանի միջնորդությամբ հիբրիդային մի տարբերակ գտնվի, որ սահմանազատում-սահմանագծումն իրականացվի ադրբեջնական զորքերի դուրսբերմանը զուգահեռ: Այսինքն՝ առաջինն այդ հատվածներում արվի սահմանազատում, սահմանագծում, ապա նոր անցնեն մյուս հատվածներին:

-Վերջերս հասարակության ներսում տպավորություն ու տրամադրություն է ստեղծվել, թե Ռուսաստանը մի տեսակ երկրորդված է Հայաստանին ու Արցախին վերաբերող հարցերից: Որպես իշխանության ներկայացուցիչ՝ նման միտում տեսնո՞ւմ եք:

-Ոչ, նման միտում չկա, պարզապես այս պահին Ռուսաստանն Ուկրաինայի հետ կապված իր հարցերով է զբաղված, հետեւաբար նրանք այս պահին իրենց մաշկին ավելի մոտ խնդիրներով են զբաղված: Իսկ մեր անվտանգային հարցերը չեն կարող սպասել, որովհետեւ մեր հակառակորդի վարքագիծն անկանխատեսելի է, ու ցանկացած պահի կարող է ագրեսիվ գործողություններ սկսել: Որպես իշխանություն, պետություն՝ պարտավոր ենք ամեն քայլ անել, որ ապահովվի մեր անվտանգությունը՝ իհարկե ոչ ի վնաս հայ-ռուսական ռազմավարական դաշնակցության կամ համագործակցության:

-Այսինքն՝ ինչքան էլ Հայաստանը երկխոսի Արեւմուտքի հետ, Ադրբեջանի հետ, միեւնույնն է, Ռուսաստանի ձեռքը պետք է զարկերակին լինի՞:

-Չէի ասի, թե Մոսկվայի ձեռքը պետք է զարկերակին լինի: Մենք ինքնիշխան պետություն ենք, հետեւաբար մեր արտաքին քաղաքականությունը կառուցում ենք՝ մեր շահերից ելնելով: Կրկնում եմ՝ եթե չլիներ Ռուսաստան-Ուկրաինա հակամարտությունը, ապա հայ-ադրբեջանական խնդիրն էլ այլ կոնտեքստում կլիներ:

Զրուցեց ՍԵՎԱԿ ՎԱՐԴՈՒՄՅԱՆԸ

ԱԺ-Ն ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆ ՉՈՒՆԻ

Ազգային ժողովը չունի որեւէ իրավասություն օտարերկրյա քաղաքացուն անցանկալի անձ ճանաչելու վերաբերյալ: Ինչպես հայտնի է, երեկ Նիկոլ Փաշինյանի ընտանիքին պատկանող լրատվամիջոցը հոդված հրապարակեց, ըստ որի՝ ՌԴ Պետդումայի պատգամավոր Կոնստանտին Զատուլինը համարվում է անցանկալի անձ:

Ապա անձամբ Զատուլինը հրապարակեց ՀՀ ԱԺ կողմից իրեն ուղարկված գրությունը, որում ասվում է. «Ազգային ժողովի ղեկավարության անունից հայտնում ենք, որ, ցավոք, Հայաստանի Հանրապետության դեմ վերջին շրջանի Ձեր հրապարակային հայտարարությունները վնասում են մեր պետությունների միջեւ բարեկամական եւ դաշնակցային հարաբերությունների զարգացմանը: Այս առումով ապագայում Ձեր այցը Հայաստանի Հանրապետություն համարվում է անցանկալի»:

Սակայն ինչպես արդեն նշեցինք, ՀՀ Ազգային ժողովը Սահմանադրությամբ նման լիազորություն առհասարակ չունի:

Այդ լիազորությամբ օժտված են միայն ազգային անվտանգության մարմինները՝ համապատասխան տվյալների հիման վրա, իսկ այդ տվյալները ներկայացնելու իրավասություն ունեն Արտաքին գործերի նախարարությունը, Ոստիկանությունը եւ Հանրապետության նախագահի աշխատակազմը՝ ըստ իրենց իրավասության: ԱԺ նախագահը նման իրավասություն չունի:

ԴԺԳՈՀՈՒԹՅՈՒՆ՝ ԹԱՆԿԱՑՈՒՄԻՑ

Մեծ թվով ռուսների եւ ուկրաինացիների՝ Հայաստան ժամանելուց հետո Երեւանում բնակարանների վարձակալության գները վերջին ամիսներին թռիչքաձեւ աճել են: Հայաստան ժամանածներից շատերը մայրաքաղաքում բնակարանների վարձակալության բարձր գների պատճառով գերադասում են Երեւանի փոխարեն բնակարաններ վարձակալել Դիլիջանում, Վանաձորում եւ այլ քաղաքներում: Այդ քաղաքներում աճել են բնակվարձերը: Բնակվարձի աճը ուրախացնում է վարձակալվող բնակարանների տերերին, սակայն մտահոգում է վարձով ապրող զինվորականների ընտանիքներին: Դիլիջան քաղաքում վարձակալությամբ բնակվող, 1-3 անդամ ունեցող զինվորականի ընտանիքի բնակվարձը հոգալուն պետությունը 38 հազար դրամով է աջակցում, բնակվարձի թանկացման հետեւանքով զինվորականները ստիպված են իրենց ոչ բարձր աշխատավարձից վարձավճարի համար մասհանում անել : Զինվորականները դժգոհ են, որ բնակարանների վարձավճարների բարձրացումից իրենք անպաշտպան են:

ԼՈՒՐԵՐ

ՀԱՅՏՆԻ Է ՀԱՆԴԻՊՄԱՆ ՎԱՅՐԸ

Ազգային ժողովի նախագահ Ալեն Սիմոնյանը երեկ հաստատեց, որ այս ամսվա վերջին վարչապետ Նիկոլ Փաշինյանը մեկնելու է Սոչի: Առաջին անգամ Փաշինյանի՝ Սոչի մեկնելու մասին հայտարարել էր «Վեդոմոստի»-ն՝ հղում անելով իր դիվանագիտական աղբյուրներին, եւ գրել էր, որ Նիկոլ Փաշինյանը եւ Իլհամ Ալիեւը կարող են հանդիպել Ռուսաստանում: Սպասվում է, որ այցի ընթացքում եռակողմ բանակցություններ կանցկացվեն Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինի եւ Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւի մասնակցությամբ: Պարբերականի տվյալներով՝ հանդիպումը սկսել է նախապատրաստվել Աստանայում՝ հոկտեմբերի 14-ին ԱՊՀ գագաթնաժողովում, Պուտինի ելույթից հետո:

Հավելենք, որ Հայաստանի եւ Ադրբեջանի ղեկավարների նախորդ երկու հանդիպումները՝ Թուրքիայի նախագահ Ռեջեփ էրդողանի եւ Ֆրանսիայի նախագահ Էմանյուել Մակրոնի մասնակցությամբ, Պրահայում էր հոկտեմբերի 6-7-ը՝ Եվրոպական քաղաքական հանրության հավաքի ընթացքում: Որպես հանդիպման հավանական վայր նշվում էր նաեւ Մոսկվան, սակայն, ի վերջո, ընտրությունը կանգ է առել Սոչիի վրա:

ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԱՀԱՋԱՆԳ՝ ՎԱՐՈՐԴՆԵՐԻՑ

Երեկ ArmLur.am-ի խմբագրություն են ահազանգել Երեւանի քաղաքային տրանսպորտի մի խումբ վարորդներ: Վերջիններս խնդրում եւ պահանջում են, որպեսզի Երեւանի քաղաքապետարանը «պլան» կոչվածը հանի վարորդների վրայից:

Մեզ հետ զրույցում վարորդներից մեկը վրդովված հայտնեց, որ այսպես շարունակել այլեւս չեն պատրաստվում, քանի որ չեն կարողանում վճարել սահմանված «պլանային» գումարը, եւ, բացի այդ, անսարք մեքենայի համար նույնպես նրանք են վճարում, արդյունքում դուրս է գալիս, որ վարորդները հազիվ կարողանում են այդ ծախսերը հոգալ:

«Մենք պահանջում ենք, որ մանուշակագույն եւ այլ երթուղային տրանսպորտները, որոնք չեն նորացվել, նույնպես նորացվեն, եւ մենք գումարի հետ գործ չունենանք, ստանանք նորմալ աշխատավարձ մյուս երթուղայինի վարորդների նման, այդ ժամանակ նոր կլինեն իրական բարեփոխումներ, եւ բոլոր վարորդները կլինեն հավասար պայմաններում»,- հավելեցին նրանք:

ԼԻԴԱ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ԻՐԱՎԻՃԱԿ

ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԱՐՁԱԳԱՆՔԸ

Հայաստանի ոստիկանությունն առաջարկում է ՀՀ քաղաքացիություն շնորհել Հայաստանի Հանրապետությանը բացառիկ ծառայություններ մատուցած, ինչպես նաեւ տնտեսության, գիտության, կրթության, մշակույթի, առողջապահության, սպորտի բնագավառներում նշանակալի ավանդ ունեցող անձանց: Ավելին՝ մի շարք չափանիշներ է սահմանել ՀՀ քաղաքացիություն շնորհելու դիմաց: Իսկ տնտեսության բնագավառում նշանակալի ավանդի նկարագրությունը եւ գնահատման չափանիշներն են առեւտրային կազմակերպության կանոնադրական կապիտալի մեջ ներդրումը՝ առնվազն 150 000 դոլարի չափով, 10 տարի, պետական պարտատոմսերի ձեռքբերումը՝ առնվազն 150 000 դոլարի չափով, առնվազն 7 տարի ժամկետով: Բացի այս, անշարժ գույքի ձեռքբերումը՝ առնվազն 150 000 դոլարի չափով, նվազագույնը 10 տարի ժամկետով, 100 հազար դոլարին համարժեք դրամ եւ ավելի չափով ֆինանսական ներդրումը բարձր տեխնոլոգիաների ոլորտի ընկերությունում կամ վենչուրային հիմնադրամներում: Բացի այս, պետք է առողջապահական բնագավառում պետական շքանշանով կամ մեդալով պարգեւատրված լինի: Սակայն ոստիկանության այս առաջարկը մեծ քննադատությունների տեղիք է տվել: Քաղաքացիներից մի քանիսը հասցրել են մեկնաբանել որոշման այս նախագիծը: Նրանցից մեկը նկատել է՝ նշելով. «Խայտառակ նախագիծ է: Դրամի դիմաց քաղաքացիության շնորհումը նույնն է, ինչ հայրենիքի վաճառք»: Մեկ այլ քաղաքացի գրել է. «Երկիրը էժանով ծախելու ֆորմալ նախագիծ է, ամոթ է ուղղակի: Ստացվում է՝ 1 միլիոն թուրք կոպեկով կարող է գնել ձայնի իրավունք եւ վաղը ռեֆերենդում կազմակերպել»: Ի դեպ, քաղաքացիների մեծ մասն առաջարկում է որոշ երկրների՝ Ադրբեջանի, Թուրքիայի քաղաքացիների նկատմամբ այս հարցում սահմանափակում կիրառել՝ նախագիծը համարելով վտանգավոր:

ՏԵՎԱԿԱՆ ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ

ԱՄՆ-ն հավատարիմ է Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ խաղաղ բանակցություններին, տարածաշրջանում ԱՄՆ-ի միակ նպատակն է օգնել երկու երկրներին՝ հասնելու համապարփակ եւ տեւական խաղաղության: Այս մասին վստահեցրել է Ամերիկայի Միացյալ Նահանգների պետդեպարտամենտի խոսնակ Նեդ Փրայսը: «Ի վերջո, Հայաստանի եւ Ադրբեջանի որոշելիքն է, թե ՌԴ նախագահ Պուտինի հրավերն օգտակար կլինի արդյոք նրանց համար՝ հասնելու այդ տեւական խաղաղությանը»,-ասել է Փրայսը:

Նա կասկածի տակ է դրել այն, որ Մոսկվան հարգում է իր հարեւանների ինքնիշխանությունը եւ երկարաժամկետ գործընկեր լինելու հանգամանքը:

«Ի վերջո, չկա ավելի մեծ աջակցություն, քան ԱՄՆ-ինն է՝ Հարավային Կովկասի երկրների ինքնիշխանության ու անկախության համար»,-նշել է խոսնակը՝ ընդգծելով ու կարեւորելով 1991-ին Խորհրդային միությունից Հայաստանի, Վրաստանի եւ Ադրբեջանի անկախացումը:

ՆՈՐ ՓՈՒԼ

ԿԱՐԵՎՈՐ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ

ԱԺ մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ, անկուսակցական Թագուհի Թովմասյանը սոցցանցի իր էջում գրում է. «Կանադայում խորհրդարանական պատվիրակությամբ հանդիպեցինք արտաքին գործերի նախարարի խորհրդարանական քարտուղար, պատգամավոր Ռոբերտ Օլիֆնթի հետ: Նա չափազանց տեղեկացված էր Հայաստանին պատուհասած վտանգների եւ ժողովրդավարության սպառնալիքների մասին:

Հայաստան-Կանադա հարաբերությունները բարեկամության նոր փուլ են մտնում, քանի որ Հայաստանում շուտով կբացվի Կանադայի դեսպանատուն: Հույս ունեմ՝ նախապատրաստական գործընթացը արագ կավարտվի: Իսկ մինչ այդ՝ մեր հանդիպման ժամանակ, թարմ տեղեկություններ տվեցի մեր գործընկեր Ռոբերտ Օլիֆնթին բոլոր այն վտանգների մասին, որոնց Հայաստանի ու Արցախի խաղաղ բնակչությունը բախվում է յուրաքանչյուր օր.

- Ադրբեջանը շարունակաբար ձեռնարկում է նոր ռազմական ագրեսիաներ՝ ընդդեմ Հայաստանի,
- Ադրբեջանը բռնազավթում է ՀՀ ինքնիշխան տարածքի մաս կազմող նորանոր շրջաններ,
- Ադրբեջանը ոտնահարում է միջազգային հումանիտար իրավունքի անկյունաքարային դրույթները, թույլ չի տալիս իր իսկ ռազմական ագրեսիայի զոհ դարձած հայ զինծառայողների մարմինները, շրջափակման մեջ գտնվող զինծառայողներին դուրս բերել իր կողմից օկուպացված շրջաններից,
- Ադրբեջանը խոշտանգում է նույնիսկ կանանց, տարեցներին:

Ադրբեջանի այս հանցավոր վարքագիծը պետք է արժանանա լուրջ գնահատականի. միջազգային հանրության հասցեական, բայց դատարկ դատապարտումներն արդեն անօգուտ են:

Ագրեսոր Ադրբեջանը պիտի պատժվի միջազգային իրավասու օղակների կողմից, եւ այս ուղղությամբ բոլոր միջազգային գործընկերներիս կողմից կոնկրետ քայլերի իրականացումը դարձել է հրամայական՝ ի պաշտպանություն խաղաղ հայ բնակչության կյանքի եւ մյուս հիմնարար իրավունքների:

Անդրադառնալով արդի տարածաշրջանային զարգացումներին՝ խորհրդարանական քարտուղարի հետ հանդիպման ժամանակ ընդգծեցի Արցախի անկախության ճանաչմանը օժանդակելու անհրաժեշտությունը, միաժամանակ ահազանգեցի, որ Ադրբեջանի կողմից շրջափակված Արցախին միայնակ թողնելը բերելու է Ադրբեջանի կողմից հայրենի Արցախում բնակվող հայության նոր ցեղասպանության:

Կրկին շնորհակալություն հայտնեցի Կանադային՝

- Հայոց ցեղասպանությունը պաշտոնապես ճանաչելու,
- Արցախի անկախությունը ճանաչելու հարցը խորհրդարանական մակարդակով քաղաքական դիսկուրս մտցնելու,
- 2020թ. պատերազմի ժամանակ դեպի Թուրքիա ռազմական արտադրանքի արտահանման թույլտվությունների կասեցման, Թուրքիային ավիաշարժիչների մատակարարումը դադարեցնելու համար:

Անդրադարձանք նաեւ Հայաստանում ժողովրդավարության ներկա վիճակին, սպառնալիքներին, խորհրդարանի դերի ամրապնդմանը վերաբերող հարցերին»:

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՋՈՀԵՐԻ ՆՈՐ ԹԻՎ

ՀՀ ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանը երեկ լրագրողների հետ զրույցում սեպտեմբերյան պատերազմում հայկական կորուստների նոր թիվ է հրապարակել:

«Հայաստանի Հանրապետությունը ենթարկվում է հարձակման, Հայաստանի Հանրապետության անվտանգության համակարգը ակնհայտ խնդիրներ է ցուցադրում: Ես ներողություն եմ խնդրում, բայց ինձ որեւէ մեկի տրամադրությունը, բացի ՀՀ անվտանգությունից, հետաքրքիր չէ: Ես իմ երկրի սահմանները պետք է պաշտպանեմ: Եվ այն պարտավորությունները, որոնք գործընկեր երկրները վերցրել են, պետք է ի կատար ածվեն: Դա է մեր հիմնական նպատակը: Թե ինչ-որ մեկը կնեղանա, ինչ-որ պրոպոգանդայի բյուրոյի անդամ իրեն վատ կզգա, դա շատ երրորդական, չորրորդական հարց է: ՀՀ-ն ամեն օր ենթարկվում է հարձակման, իսկ մենք լսում ենք տարբեր հեքիաթներ այդ հեռուստաալիքների հայտնի դերակատարների կողմից: Մենք սեպտեմբերի հարձակման հետեւանքով ունենք 240 զոհ, ունենք մեր սահման ներխուժած օտարերկրյա զորք: Եվ ՀՀ-ն այդքան մեծ չէ, որպեսզի հանդուրժի թեկուզ մեկ մետր: Հայաստանը ոչ մի երկրի հետ չի փչացնում իր հարաբերությունները, Հայաստանն ուզում է, որ իր նկատմամբ լինեն արդար, իր սահմանների հետ կապված պարտավորությունները, որոնք վերցվել են, ի կատար ածվեն, եւ դրա համար անելու է ամեն ինչ»,- ասել է Ալեն Սիմոնյանը:

Հ. Գ. Ավելի ուշ Ալեն Սիմոնայնի մամուլի խոսնակ Ծովինար Խաչատրյանը տեղեկացրեց. «Այսօր ձեպազրույցին ՀՀ ԱԺ նախագահի կողմից հրապարակած ադրբեջանական վերջին ագրեսիայի հետեւանքով զոհվածների եւ անհետ կորածների թիվը շփոթմունքի արդյունք է: Խնդրում եմ թիվը հրապարակելիս հաշվի առնել պաշտոնական տվյալները: Հայցում եմ բոլորի ներողամտությունը»:

ՕՐԱԿԱՐԳԱՅԻՆ ՀԱՐՑԵՐ

Հոկտեմբերի 26-ին՝ Արցախի Հանրապետության Ազգային ժողովի պետահրավական հարցերի մշտական հանձնաժողովի հերթական նիստում, օրակարգային հարցերի շրջանակում քննարկվել է Արցախի Հանրապետության Սահմանադրության փոփոխության նախագիծը:

Առաջարկվում է սահմանել, որ Սահմանադրությունը եւ Սահմանադրության 175-րդ հոդվածում «Արցախի Հանրապետության իրավազորության սահմանները» փոփոխություններն ընդունվում են միայն հանրաքվեով՝ անփոփոխ թողնելով Սահմանադրություն ընդունելու, փոփոխելու նախաձեռնության իրավունք ունեցողների շրջանակը:

Նախագծով, միաժամանակ, առաջարկվում է սահմանել, որ Սահմանադրության մյուս հոդվածներում փոփոխություններն ընդունում է Ազգային ժողովը՝ պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ երրորդի, Հանրապետության նախագահի կամ ընտրական իրավունք ունեցող քաղաքացիների առնվազն հինգ տոկոսի նախաձեռնությամբ՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երկու երրորդով ընդունված որոշմամբ:

Նախագիծն արժանացել է հանձնաժողովի հավանությանը, եւ 1-ին ընթերցմամբ այն կընդգրկվի ԱԺ հերթական նիստի օրակարգում:

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՋԻՆՎՈՐԱԿԱՆ ՆՈՐ ՀԱՄԱԿԱՐԳ

Հայաստանում կներդրվի զինվորական ծառայության նոր համակարգ, այդ նպատակով «Զինվորական ծառայության եւ զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կկատարվեն: ArmLur.am-ը տեղեկացավ, որ իշխանությունները մտադիր են ներդնել նոր ծրագիր, այս անգամ՝ շարքային եւ սպայական կազմերի պարտադիր զինվորական ծառայությունից պայմանագրային զինվորական ծառայության անցման միջոցով: Խոսքը «Պատշդան հայրենյաց» ծրագրի մասին է, որի ժամկետը նախատեսվում է 5 տարի: Բացի այս, նշենք, որ կնքած պայմանագրի ժամկետի ավարտից հետո, անկախ զինծառայությունից արձակվելու կամ ծառայությունը շարունակելու ցանկությունից, կամ առողջական վիճակի պատճառով վաղաժամկետ զորացրվելու դեպքում այդ զինծառայողներին հատվարկվելու է պատվովճար՝ 5 մլն դրամ չափով, որը զինծառայողը տնօրինելու է իր հայեցողությամբ:

Ի դեպ, ծառայության 5 տարիների ընթացքում պայմանագրային զինծառայողները վարձատրվելու են ամսական 400 հազար դրամով: Մինչ այդ նախատեսվում է ներդնել շարքային կազմի կարճաժամկետ պարտադիր զինծառայություն՝ ՀՀ պետական բյուջե գումար վճարելու պայմանով, որտեղից գոյացած գումարներով էլ վարձատրվելու են զինծառայողները: Զինծառայողը կարող է 24 մլն դրամ վճարել եւ վաղաժամկետ արձակվել պարտադիր զինվորական ծառայությունից՝ծառայելով ընդամենը 4.5 ամիս:

Ի դեպ, «Զինվորական ծառայության եւ զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով ներդրված՝ Պաշտպանության նախարարության կողմից նշված ծառայության վայրում եւ պայմաններով շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայություն անցնելու համակարգը ենթադրում էր 36-ամսյա ժամկետով շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության անցում՝ նախարարության հետ քաղաքացիաիրավական բնույթի պայմանագիր կնքելու միջոցով:

Պարզվում է՝ համակարգի ներդրումից հետո համապատասխան ծառայություն անցնելու ցանկություն հայտնողների քանակն ի սկզբանե չի բավարարել ակնկալվող քանակները՝ աստիճանաբար նվազելով: Ավելին՝ 2021-2022թթ. զորակոչերի ընթացքում չի արձանագրվել ոչ մի դիմում: Բացի այդ, 2020 թվականի ռազմական գործողություններից հետո բավական թվով զինծառայողներ վաղաժամկետ հրաժարվել են ծրագրից եւ շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության 24-ամսյա ժամկետը լրացած լինելու հիմքով արձակվել զինվորական ծառայությունից: ArmLur.am-ը տեղեկացավ նաեւ, որ ներկայումս ծրագրով զինվորական ծառայությունը շարունակում են ընդամենը երկու զինծառայող, որոնց ծառայության 36-ամսյա ժամկետն ավարտվում է 2023 թվականի հունվարին:

ՍՅՈՒՆԵ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

ԱՆՕՐԻՆԱԿԱՆ ԳՆՈՒՄՆԵՐ

Հոկտեմբերի 24-ին՝ ժամը 22:00-ին, ոստիկանության օպերատիվ կառավարման կենտրոն է զանգել մի քաղաքացի եւ հայտնել, որ նույն օրը՝Մարգարյան փողոցի բանկոմատում գործարք կատարելուց հետո, մոռացել է վերցնել քարտը, իսկ քիչ անց հաղորդագրություններ է ստացել, որ իր քարտով գնումներ են անում:

Ոստիկանությունից հայտնում են, որ հաղորդումը փոխանցվել է ոստիկանության Մաշտոցի բաժին: Մեկնած օպերատիվ խումբը պարզել է, որ նշված քարտով գնումներն արվել են Աջափնյակ վարչական շրջանի տարբեր խանութներում:

Բաժնի քրեական հետախույզները հաջորդ օրը ստացել են օպերատիվ տվյալ, որն իրացրել են Մաշտոցի վետերանների հետ: Ձեռնարկված միջոցառումների արդյունքում պարզվել է, որ ուրիշի քարտով գնումներն արել է մայրաքաղաքի Ֆուչիկի փողոցի բնակիչ, 29-ամյա մի տղամարդ: Հոկտեմբերի 25-ի ցերեկը Մարգարյան փողոցում նա հայտնաբերվել, ձերբակալվել եւ տարվել է Մաշտոցի բաժին:

Կազմված փաստաթղթերը փոխանցվել են քննչական բաժին: Հանգամանքները պարզվում են:

ԹԱՐՄ ՀԵՏՔԵՐՈՎ

Հոկտեմբերի 23-ին՝ ժամը 12:55-ին, «Հրազդան» բժշկական կենտրոնից ոստիկանության Հրազդանի բաժին ստացվել էր ահազանգ, որ պարանոցի կտրածծակած, թափանցող վնասվածքով բուժօգնության է տեղափոխվել 53-ամյա տղամարդ, որը Հրազդանի բնակիչ է: Նրան հիվանդանոց հասցրած անձը բժիշկներին հայտնել էր, թե շինարարության ժամանակ պարանոցին երկաթե ամրան է ընկել:

Ծաղկաձորի Սարալանջի փողոցի շինհրապարակ մեկնած օպերատիվ խումբը նախ պարզեց, որ տուժողը շինարարական աշխատանքների ղեկավարն է, եւ ամենաառանցքայինը՝վնասվածքը պատահականության հետեւանք չէր. նրան դանակահարել էին: Օպերատիվ-հետախուզական միջոցառումները շարունակվեցին, որոնց միացան նաեւ Կոտայքի մարզային վարչության եւ Հրազդանի բաժնի Ծաղկաձորի բաժանմունքի ծառայողները: Կարճ ժամանակում Հրազդանի քրեական հետախույզները պարզեցին եղելությունը: Նախնական տվյալներով՝ ժամը 12:45-ի սահմաններում շինհրապարակում փողային հարցերի շուրջ վեճ էր ծագել, այդ ընթացքում էլ հիվանդանոց տեղափոխված տղամարդուն դանակով խփել էր նրա հետ նախկինում աշխատած 65-ամյա մի տղամարդ, որը Գեղարքունիքի մարզի Փամբակ գյուղի բնակիչ է:

Հրազդանի ոստիկանների հետագա համագործակցությունը Վարդենիսի բաժնի ծառայողների հետ էր: Նույն օրը՝երեկոյան ժամը 9-ին մոտ, Փամբակում կասկածվողը հայտնաբերվեց, ձերբակալվեց ու ներկայացվեց Կոտայքի մարզային քննչական վարչություն: Նրա խուզարկությամբ հայտնաբերվել է արնանման հետքերով դանակ, որը, նախնական տվյալներով, հանցագործության գործիքն է:

Դեպքի առթիվ տարածքային քննչական մարմնում սպանության փորձի հատկանիշներով քրեական վարույթ է նախաձեռնվել: Նախաքննությամբ հանգամանքները պարզվում են:

ԼՈՒՐԵՐ

ԴԱՆԱԿԱՀԱՐՈՒԹՅՈՒՆ

Հոկտեմբերի 25-ին «Աշտարակ» բժշկական կենտրոնից ոստիկանության Աշտարակի բաժին հաղորդում է ստացվել, որ կտրած-ծակած վերքերով բուժօգնության է տեղափոխվել Ուշան գյուղի բնակիչ, 23-ամյա երիտասարդ. հայտնում է ՀՀ ոստիկանության մամուլի ծառայությունը:

Տուժածը հայտնել էր, որ սարում ծառ կտրելիս ընկել է: Ոստիկանության Աշտարակի բաժնի քրեական հետախույզները ձեռնարկած միջոցառումների արդյունքում պարզել են, որ Աշտարակ քաղաքի Վարդգես Պետրոսյան փողոցում տեղի ունեցած վիճաբանության ժամանակ երիտասարդին մարմնական վնասվածքներ էր պատճառել 17-ամյա համագյուղացին: Նա Ուշան համայնքում հայտնաբերվել, ձերբակալվել եւ տարվել է բաժին, որտեղ խոստովանել է, որ կենցաղային հարցերի շուրջ վիճաբանության ժամանակ դանակահարել է 23-ամյա համագյուղացուն:

17-ամյա պատանին եւ կազմված փաստաթղթերն ուղարկվել են Արագածոտնի մարզային քննչական վարչություն:

ՊԱՐԳԵՎԱՏՐՎԱԾ ՔՆՆԻՉԸ

Նիկոլ Փաշինյանի դեմ քրեական գործ չհարուցած, ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի քննչական երկրորդ վարչության պետի տեղակալ Դավիթ Կոստանդյանը պարգեւատրվել է ՀՀ վարչապետի հուշամեդալով:

Հոկտեմբերի 24-ին Հակակոռուպցիոն կոմիտեի աշխատողի օրվա եւ Կոմիտեի կազմավորման առաջին տարեդարձին նվիրված միջոցառմանը Իրավակարգի եւ օրինականության ամրապնդման գործում ներդրած ավանդի համար ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի քննչական երկրորդ վարչության պետի տեղակալ Դավիթ Կոստանդյանը, քննչական երրորդ վարչության պետի տեղակալ Արթուր Սարգսյանը – Ներքին անվտանգության վարչության ՀԿԳ ավագ քննիչ Սերգեյ Առաքելյանը ՀՀ վարչապետի կողմից պարգեւատրվել են ՀՀ վարչապետի հուշամեդալով: Բարեխիղճ եւ արդյունավետ աշխատանքի, ինչպես նաեւ Հակակոռուպցիոն կոմիտեի աշխատողի օրվա եւ Կոմիտեի կազմավորման առաջին տարեդարձի կապակցությամբ կոմիտեի աշխատակիցները պարգեւատրվել են մեդալներով, հուշանվերներով եւ պատվոգրերով: Նկատենք, որ պարգեւ ստացած անձանցից մեկը պատահական մարդ չէ:

Ինչպես հայտնի է, տարբեր պաշտոնատար անձինք Հատուկ քննչական ծառայություն դիմում էին ներկայացրել, որ Նիկոլ Փաշինյանի դեմ հարուցվի քրեական գործ արդարադատության դեմ ճնշումների, դատարանների դռները փակելու եւ այլ գործընթացների մասով: ՀՔԾ մերժել էր պաշտոնատար անձանց դիմումը, իսկ այդ մերժող քննիչը եղել էր երկու օր առաջ Նիկոլ Փաշինյանի կողմից ՀՀ վարչապետի հուշամեդալ ստացած Դավիթ Կոստանդյանը:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ հոկտեմբերի 25-ից 26-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտել են հանցագործության 60 դեպք, որոնցից 2-ը՝նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆՊԱՍՏ՝ ՄԱՅՐԵՐԻՆ

ՆԱԽԱԳԻԾՆ ԸՆԴՈՒՆՎԵՑ

ՀՀ ազգային ժողովը երկրորդ ընթերցմամբ եւ ամբողջությամբ ընդունեց կառավարության ներկայացրած օրենքի նախագիծը, որով հնարավորություն է տրվում մինչեւ 2 տարեկան երեխայի խնամքի նպաստ նշանակել ոչ միայն գյուղաբնակ, այլ նաեւ քաղաքաբնակ չաշխատող մայրերին:

««Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ եւ փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծն ԱԺ նիստում ներկայացրել էր ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի փոխնախարար Դավիթ Խաչատրյանը:

«Առաջարկում ենք խնամքի նպաստ նշանակել ՀՀ-ում բնակության վայրի հասցեով հաշվառում ունեցող եւ մինչեւ 2 տարեկան երեխա խնամող ծնողին՝ անկախ հաշվառման վայրից եւ վարձու աշխատող հանդիսանալու հանգամանքից: Օրենքի գործողությունը տարածվելու է 2023-ի հունվարի 1-ին եւ դրանից հետո ծնված երեխաների մասով»,-նշել է Խաչատրյանը:

Ընդ որում՝ վարձու աշխատողների եւ գյուղաբնակ ծնողի համար գործող օրենսդրական կարգավորումները գործելու են, եթե երեխան ծնվել է մինչեւ 2023 թվականին հունվարի 1-ը, իսկ գյուղաբնակ ծնողի դեպքում՝ նաեւ, եթե դիմումը ներկայացվել է մինչեւ 2023 թ. դեկտեմբերի 31-ը:

Խնամքի նպաստի չափը սահմանում է ՀՀ կառավարությունը՝ խնամքի արձակուրդում գտնվող ծնողին «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի չափի նկատմամբ տոկոսային կապով, իսկ խնամքի արձակուրդում չգտնվող ծնողին՝ խնամքի արձակուրդում գտնվող ծնողի համար սահմանված չափի 85 տոկոսը չգերազանցող չափով: Խնամքի արձակուրդում գտնվող գյուղաբնակ ծնողին խնամքի նպաստ կվճարվի խնամքի արձակուրդում գտնվող եւ չգտնվող ծնողների համար սահմանված չափերի հանրագումարի չափով:

Այսպիսով, 2023 թվականին հունվարի 1-ից եւ դրանից հետո ծնված երեխաների ծնողներին նշանակվելու է խնամքի նպաստ՝ անկախ բնակության վայրի հասցեից: Այսինքն՝ ի տարբերություն գործող կարգավորումների՝ խնամքի նպաստ կնշանակվի նաեւ քաղաքաբնակ չաշխատող մայրերին: Նախագիծը քվեարկությամբ ստացավ 62 կողմ, 4 դեմ ձայներ:

308 ՄԼՆ ԴՐԱՄ

ՏԻԳՐԱՆ ՎԻՐԱԲՅԱՆԻ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ՝ ԱՐՏՈՆՅԱԼ

Հոկտեմբերի 28-31-ը Հայաստանում կայանալիք Համաշխարհային հայկական գագաթնաժողովի համար նախատեսված է հատկացնել 308 մլն 904 հազար դրամ, ընդ որում՝ գագաթնաժողովի կազմակերպումը վերապահված է «Ֆակտորի Փրոդաքշն» ՍՊԸ-ին, որը, ըստ մամուլի, փոխկապակցված է Երեւանի նախկին քաղաքապետ Տիգրան Վիրաբյանի հետ:

Այսպիսով, ArmLur.am-ը տեղեկացավ, որ գագաթնաժողովի բացումը նախատեսվում է իրականացնել հոկտեմբերի 28-ին, որի համար անհրաժեշտություն են համարել տարածքի վարձակալություն, կահավորում, տեխնիկական ապահովում եւ սպասարկում, դիմավորման ծառայություններ, ինչպես նաեւ դիմավորողների հագուստ, դիմահարդարում եւ վարսահարդարում: Պայմանագրում նշվում է, թե բացումը վարելու է պրոֆեսիոնալ հաղորդավար:

Ըստ պայմանագրի՝ գագաթնաժողովի անցկացման համար անհրաժեշտ է.

-ճարտարապետական լուսավորության համար լուսատու սարքեր՝ առնվազն 30 հատ,

-լույսերի կառավարման վահանակ՝ թվով 2 հատ,

-ձայնային համակարգ՝ նախատեսված համերգային ծրագրի համար, ինչպես նաեւ հաղորդավարների եւ բանախոսների ելույթների համար, առնվազն 30 KV ձայնային համակարգ տարբեր տեղերում տեղադրելու համար: Բեմահարթակ մոդուլներով՝ առնվազն 100 քմ:

Գագաթնաժողովի աշխատանքային նիստերը եւ փակումը տեղի են ունենալու «Մերիդիան» էքսպո կենտրոնում, որտեղ մատուցվելու են հետեւյալ ծառայությունները՝

-հիմնական դահլիճի պատրաստում (700 անձի համար)՝ անհրաժեշտ տեխնիկական հագեցվածությամբ,

-երկու փոքր դահլիճների պատրաստում (յուրաքանչյուրը 200 անձի համար)՝ անհրաժեշտ տեխնիկական հագեցվածությամբ,

-նախամուտքի, այդ թվում՝ ընդունելության համար գրանցումների տարածքների ձեւավորում եւ կահավորում,

-տարածքի ներքին բրենդավորում, այդ թվում՝ կահավորում,

-տարածքի արտաքին բրենդավորում,

-լրագրողների համար տարածքների պատրաստում,

-B2B տարածք:

Գագաթնաժողովի համար որպես գույք վարձակալվելու է՝

-սպիտակ բազկաթոռ՝ 14 հատ,

-բազմոց՝ 22 հատ,

-1100 հատ փափուկ աթոռ,

-30 հատ պուֆեր,

-սպիտակ կամ սեւ 20 հատ բազմոց,

-10 հատ փոքր սեղան,

-12 հատ փոքր սեղան:

Գագաթնաժողովի բացմանը եւ փակմանը կազմակերպվելու են 700 անձի համար հյուրասիրություններ (ձկան տեսակների, տաք սնունդ, մսային եւ բուսական կանապեներ, հյութեր, միրգ, թխվածք)՝ յուրաքանչյուր օրը 600 անձի համար: Աշխատանքային երեք օրերին տրամադրվելու է սուրճի ընդմիջում՝ յուրաքանչյուր օրը 600 անձի համար: Սպասարկող անձնակազմին եւ կամավորներին տրամադրվելու են լանչ բոքսեր՝ 570 հատ:

Բացի այդ, «Զվարթնոց» օդանավակայանում կազմակերպվելու է մինչեւ 50 անձի դիմավորում եւ ճանապարհում, տրամադրվելու է նաեւ ներկայացուցչական դասի 5 մեքենա: Օրական անվտանգությունը ապահովելու է վեց աշխատակից:

Ինչպես նշեցինք, «Ֆակտորի փրոդաքշն»-ն է զբաղվում կազմակերպչական հարցերով: «Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի համաձայն՝ «Ֆակտորի փրոդաքշն» ընկերության հիմնադիրները Վազգեն Պողոսյանն ու Ռուդիկ Տեր-Գալստյանն են, բայց ընկերության ստեղծման, ինչպես նաեւ այժմյան գործունեության մասով ակտիվ դերակատարում ունի Երեւանի նախկին փոխքաղաքապետ, Հանրային հեռուստաընկերության գլխավոր պորդյուսեր Տիգրան Վիրաբյանը: Վերջերս «շա՛տ պատահականորեն» պետական նշանակության կարեւորագույն ու «յուղոտ» բոլոր միջոցառումները միշտ նույն՝Հանրային ՀԸ-ի գլխավոր պրոդյուսերի հետ կապվող ընկերությունն է հաղթում:

Օրինակի համար նշենք, որ 2019-ի Ամանորին հենց «Ֆակտորի»-ն է 24 միլիոն դրամով վառել շուրջ 150 հազար դոլարանոց տոնածառի լույսերն ու ապահովել այդ օրվա տոնական երեկոն: 2018-ին էլ «Ֆատկորի»-ին է վստահվել Ֆրանկոֆոնիայի միջոցառումների կազմակերպումը, 2019-ին «Ֆակտորի փրոդաքշն»-ն է կազմակերպել Քաղաքացու օրվան նվիրված միջոցառումները, նաեւ Երեւանում կայացած Բռնցքամարտի առաջնությունը: Եվ այստեղ, ինչպես կասեր ընդդիմադիր Նիկոլ Փաշինյանը, «բա կոռուպցիան պոզով-պոչո՞վ է լինում»»:

ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԿԵՂԾ ՆՎԵՐՆԵՐ

Հոկտեմբերի 18-ին Դիլիջանի համայնքապետարանի ինտերնետային կայքում լուսանկարներով հանդերձ տեղադրվել է հետեւյալ տեղեկատվությունը.

«Հաղարծնի մանկապարտեզի սաները նվերներ են ստացել համագյուղացի Էդվարդ Գուլինյանի կողմից: Փոքրիկների համար իրական տոն է, երբ շատ քաղցրավենիք ու հյութ ունեն: Շնորհակալություն Էդվարդ Գուլինյանին երեխաներին անակնկալ անելու համար»: Համայնքապետարանի ինտենետային կայքում զետեղված լուսանկարներում պատկերված հաղարծնեցի 3 փոքրիկների դեմքերին չկա իրական տոնի զգացողությունը, նրանց դեմքերից տխրություն է կաթում, երեխաների աչքերը շատ թախծոտ են: Ո՞ւմ մտահղացումն է մանուկներին ստիպել լուսանկարվել նվեր ստացած քաղցրավենիքի եւ հյութերի հետ. այս երեխաները իրենց տներում քաղցրավենիք ու հյութեր վայելում են, մանկապարտեզում նվեր ստացածից իրենց 7-րդ երկնքում չեն զգում: Դիլիջան համայնքից հայտնեցին, որ համայնքապետարանի ինտերնետային կայքում զետեղված լուսանկարներում պատկերված 3 փոքրիկները Հաղարծին գյուղի նյութապես ապահովված ընտանիքներից են, նվեր տրված քաղցրավենիքն ու հյութը ամենեւին էլ տոնական նորություն չեն նրանց համար: Փոքրիկ երեխաների մասնակցությամբ այդ լուսանկարները Դիլիջանի համայնքապետարանի պաշտոնական ինտերնետային կայքում տեղադրելը համացանցի բազմաթիվ օգտատերերի կողմից արժանացել է խիստ քննադատությունների:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

● *Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 21 ճՏՊ. 5 մարդ զոհվել է, 26-ը՝ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

«ԱԿԲԱ» ԲԱՆԿ

ՕՐԳԱՆԱԿԱՆ ՊԱՐԱՐՏԱՆՅՈՒԹ

Երեւանի պետական համալսարանի կենսաբանները 5-հոգանոց թիմով ստեղծել են «Մայքոֆի» ստարտափն ու սկսել զբաղվել օրգանական տարբեր թափոնների վերամշակմամբ: Երիտասարդ կենսաբանները, օգտագործելով սուրճի թափոնները, ստացել են մշակաբույսերի աճը խթանող օրգանական պարարտանյութ:

Կենսաբանների «Մայքոֆի» ստարտափի խնդիրներից մեկը թափոնների վերամշակումից արժեքավոր նյութերի ստացումն է: Այս գաղափարով էլ ստարտափը մասնակցել է գյուղատնտեսական ստարտափերի AgriTech մրցույթին ու զբաղեցրել առաջին հորիզոնականը: Ստեղծվել են նոր կապեր. ստարտափը դարձել է «Ակբա ֆեդերացիայի» Նորարարական գյուղատնտեսության աջակցման ծրագրի շահառու եւ մասնակցել «Իմփաքթ Հաբ Երեւանի» հետ անցկացվող մեկ տարի տեւողությամբ ձեռնարկատիրական ինկուբացիոն ծրագրին:

««Ակբա ֆեդերացիան» մեզ հնարավորություն տվեց մեկ տարով ունենալ «Իմփաքթ Հաբ Երեւանի» անդամակցություն եւ օգտվել այն բոլոր դասախոսություններից ու հնարավորություններից, որոնք տալիս է «Իմփաքթ Հաբ Երեւանը»: Նաեւ անհատական դասախոսություններ են կազմակերպվում «Ակբա» շահառուների համար: Մասնակցում ենք տարբեր աշխատաժողովների եւ դասընթացների՝ մարքեթինգի, ֆինանսների, բիզնեսի առաջխաղացման, գաղափարի կայունացման եւ մի շարք այլ թեմաներով, որոնք հնարավորություն են տալիս ձեւավորել ու ամբողջականացնել մեր գաղափարը: Մեր նպատակն է ստանալ էկոլոգիապես մաքուր, կենսաքայքայվող օրգանական պարարտանյութ, որը, ի տարբերություն քիմիական պարարտանյութերի, վնաս չի հասցնի հողային կամ ջրային միջավայրերին: Ցանկանում ենք մեր դրական ներդրումն ունենալ գյուղատնտեսության մեջ»,- նշում է գիտական խմբի անդամ Լիանա Վանյանը:

«Այս տարվա ընթացքում փորձարկում ենք արել գյուղատնտեսության մեջ, դաշտավայրում, ջերմոցներում, մշակաբույսերի վրա, եւ ցայտուն երեւում էր պարարտանյութով եւ առանց պարարտանյութ փորձարկումների տարբերությունը: Մեր նորույթն այն է, որ մեր փորձերում կիրառել ենք այնպիսի մանրէներ, որոնք անջատվել են Հայաստանի ու Արցախի տարածքից: Էնդեմիկ մանրէներ են, այնպիսի շտամեր, որոնք նորույթ են ամբողջ աշխարհում», - նշում է գիտական խմբի անդամ Սաթենիկ Միրզոյանը:

«Ակբա ֆեդերացիան» «Ակբա» բանկի միակ նշանակալից մասնակիցն է, բանկի բաժնետոմսերում ունի 83.8 տոկոս մասնաբաժին: «Ակբա» բանկում ունեցած մասնակցության շնորհիվ «Ակբա ֆեդերացիան» նպաստում է Հայաստանի ողջ տարածքում գյուղատնտեսության, գյուղական շրջաններում փոքր եւ միջին բիզնեսի զարգացմանը, համայնքների զարգացմանը, գյուղական շրջաններում եւ համայնքներում բիզնես միջավայրի աշխուժացմանն ու զարգացմանը, նշված ոլորտներում ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող յուրաքանչյուր անձի բարեկեցության աճին:

ՍՊԱՌՆԱԼԻՔՆԵՐ

ԹՌԻՉՔՆԵՐԸ ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ ՉԵՆ ՀԱՄՆՈՒՄ

«Արցախի ժողովրդի իրավունքների պաշտպանության եւ անվտանգության խոստումներ տվող Ադրբեջանն արդեն 30 տարի է՝ իր սպառնալիքներով փակ է պահում Ստեփանակերտի օդանավակայանը՝ զրկելով Արցախի ժողովրդին ազատ տեղաշարժի իրավունքի իրացման այս կարեւորագույն հնարավորությունից»,- ֆեյսբուքյան իր էջում գրել է Արցախի ՄԻՊ Գեղամ Ստեփանյանը:

«2012-ին, երբ վերանորոգումից հետո շահագործման է հանձնվել Ստեփանակերտի օդանավակայանը, Բաքվի իշխանություններն ուղիղ տեքստով հայտարարել են, որ ոչնչացնելու են դեպի Ստեփանակերտ թռչող քաղաքացիական օդանավերը:

Քաղաքացիական ենթակառուցվածքների թիրախավորման այն դեպքերը, որոնց ականատես եղանք 2020 թվականի պատերազմի ընթացքում, հստակ ցուցիչ էին այն բանի, որ ադրբեջանական ղեկավարությունը պատրաստ եւ ունակ է դիմելու ռազմական ցանկացած բնույթի հանցագործության՝ ընդհուպ նաեւ քաղաքացիական օդանավերի թիրախավորման:

Ստեփանակերտի օդանավակայանը կառուցվել է 1974 թվականին՝ Լեռնային Ղարաբաղի ժողովրդի՝ Հայաստանի հետ օդային հաղորդակցության հնարավորություն ստեղծելու բազմաթիվ պահանջներից հետո: Գործում էր Ստեփանակերտ-Երեւան եւ Ստեփանակերտ-Բաքու եւ հակառակ ուղղությունները: Այնուամենայնիվ, ի հեճուկս առկա պահանջարկի՝ Խորհրդային Ադրբեջանի իշխանությունները սահմանել էին խիստ սահմանափակ քանակի թռիչքներ դեպի Երեւան:

Տարբեր աղբյուրներ վկայում են, որ, արցախյան շարժմանը զուգահեռ, Ադրբեջանը սկսել էր օդանավակայանը փակելու գործողություններ ձեռնարկել: Դա արվում էր հարեւան Իվանյան համայնքում լայնածավալ շինարարության միջոցով. թռիչքուղու ուղիղ հարեւանությամբ կառուցվում էին բնակելի տներ՝ խոչընդոտելու օդանավակայանի աշխատանքները եւ այն վերջնականապես դադարեցնելու համար:

Քաղաքացիական փոխադրումները Ստեփանակերտի օդանավակայանից դադարեցին իրականացվել 1992 թվականից Ադրբեջանի կողմից Արցախի ժողովրդի դեմ սանձազերծած պատերազմի հետեւանքով:

«Աշխարհում ամեն օր մոտավոր 100.000 քաղաքացիական թռիչք է իրականացվում՝ մարդկանց տեղափոխելով մի վայրից մյուսը, սակայն այդ թռիչքներից որեւէ մեկը չի հասնում Ստեփանակերտ:

Արցախի ժողովրդի նկատմամբ վարվող խտրական ու ատելության քաղաքականությունն արտահայտվել եւ արտահայտվում է Ադրբեջանի կողմից ձեռնարկված ցանկացած գործողության մեջ: Մարդու իրավունքների պաշտպանությամբ շահագրգիռ բոլոր կառույցներից եւ անհատներից ակնկալում ենք համարձակություն՝ տեսնելու, արձանագրելու եւ հակազդելու ադրբեջանական հանցավոր գործողություններին»:

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

«Բի Էս Թի» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կազմակերպիչ) «Ակսոն» ԱՀ Բորսայի հարթակում շարունակելու է «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ին (այսուհետ՝ բանկ) սեփականության իրավունքով պատկանող հետեւյալ լոտերի բաց աճուրդը.

- ք. Երեւան, Աջափնյակ, Հաղթանակի 1-ին փողոց, 55 հասցեում գտնվող 1245.3 ք.մ. մակերեսով անասնաշենք, 1203.2 ք.մ. մակերեսով անասնաշենք, 1921.3 ք.մ. մակերեսով անասնաշենք, 11.8 ք.մ. մակերեսով ենթակայան, 1816.2 ք.մ. ընդհանուր մակերեսով ինքնակամ շինություններ եւ 4.95 հա մակերեսով հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 520000000 ՀՀ դրամ:

- ք. Երեւան, Կենտրոն, Բուդապեշտի փողոց, 26 հասցեում գտնվող 93.4 ք.մ. մակերեսով բնակելի տուն, 74.4 ք.մ. ինքնակամ մակերես եւ 0.04336 հա մակերեսով հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 49900000 ՀՀ դրամ:

Աճուրդի փուլերը հոլանդական եղանակով՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, 82/31 հասցեում 31.10.2022թ.-ին, ժ. 12:00-ին, այնուհետեւ յուրաքանչյուր աշխատանքային օր, նույն վայրում, նույն ժամին: Աճուրդի ավարտը՝ 30.12.2022թ.-ին:

Աճուրդի մասնակցության նախավճարը սահմանված է համապատասխան գույքի ընթացիկ մեկնարկային գնի 1%-ի չափով, որի վճարման վերջնաժամկետը սահմանված է յուրաքանչյուր աճուրդի փուլի օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ն: Նախավճարը վճարվում է «Բի Էս Թի» ՍՊԸ -ի դրամարկղումաճուրդի կայացման հասցեում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կանխիկի շեմը չգերազանցելու դեպքում, կամ բանկային հաշվին («Արդշինբանկ» ՓԲԸ-ում 2470103374150000 հաշվեհամարին), կամ կազմակերպչի կողմից տրված այլ հաշվեհամարին: Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝ ֆիզիկական անձանց համար անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝ աճուրդի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը, իսկ իրավաբանական անձանց համար՝ կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող փաստաթուղթ եւ աճուրդի վկայական:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով առաջարկել է ամենաբարձր գինը: Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից: Աճուրդին մասնակցած, սակայն չհաղթած անձի մուծած նախավճարը վերադարձվում է աճուրդն ավարտվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Նախավճարը ենթակա է վերադարձման, եթե աճուրդը համարվում է չկայացած: Եթե աճուրդում հաղթող ճանաչված անձը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա կորցնում է իր մուծած նախավճարը: Եթե Կազմակերպիչը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը, ապա նա պարտավոր է աճուրդում հաղթող ճանաչված անձին վերադարձնել նախավճարը:

Նախքան աճուրդի ավարտն աճուրդային լոտի նկատմամբ բանկի գրավի կամ սեփականության իրավունքի դադարման հետեւանքով աճուրդի մասնակիցների կորուստների եւ վնասների համար բանկը որեւէ պատասխանատվություն չի կրում:

Լոտերն ուսումնասիրելու ցանկություն հայտնած անձինք կարող են սույն ծանուցման օրվան հաջորդող օրվանից մինչեւ աճուրդի ավարտը, յուրաքանչյուր աշխատանքային օր, ժ. 10:00-ից մինչեւ 18:00-ն, այցելել վերը նշված հասցեներով եւ ծանոթանալ լոտերի հետ՝ այցելությունը նախապես համաձայնեցնելով Կազմակերպչի հետ: Հարկային գործակալ հանդիսանալու դեպքում աճուրդում հաղթած մասնակցի կողմից լոտի գնի վճարելու կարգը սահմանվում է վաճառողի հետ՝ փոխհամաձայնեցված ժամկետներում: Սույն ծանուցումը կարող է փոփոխվել մամուլում հրապարակվելու միջոցով: Աճուրդների անցկացման կանոնակարգին կարող եք ծանոթանալ եւ անվճար ստանալ կանոնակարգի պատճենը, դիմելով Կազմակերպչին՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցե: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել (011) 56-45-13 հեռախոսահամարով կամ այցելել www.llcbst.am, www.akson.am կայքեր:

«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ԿԱՐԾԻՔ

«ՄԵՆՔ ԿԱՆՔ...»

ՄԱՐԴԿԱՆՑ ԻՐԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Նարեկ» ղարային համույթի մասուցմամբ «Մենք կանք...» պլաստիկ ներկայացումը հիմնված է հաշմանդամություն ունեցող մարդկանց իրական պատմությունների վրա: Բեմադրությունն արվեստի լեզվով հանդիսատեսին է ներկայացնում այն խոչընդոտները, որոնց բախվում են ֆիզիկական եւ մտավոր խնդիրներ ունեցող մարդիկ:

Ներկայացման առաջնախաղը տեղի ունեցավ հոկտեմբերի 25-ին Գ. Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնի փոքր բեմում:

Մեկ գործողությամբ պլաստիկ ներկայացումը ստեղծվել է «Գլոբալ թու լոքալ» (Global to Local) եւ «Բրիջ թու Արմենիա» (Bridge to Armenia) կազմակերպությունների համագործակցության շրջանակներում: Ներկայացումը «Հաշմանդամությունը ընկալման խնդիր է: Ինչպես փոխել Հայաստանում հաշմանդամություն ունեցող երեխաների մասին այդ ընկալումը» նախագծի մի մասն է:

«Գլոբալ թու լոքալ»-ի հիմնադիր եւ ղեկավար Իրինա Ալեվերտի խոսքով՝նախագիծը նպատակ ունի փոխել հասարակության վերաբերմունքը հաշմանդամություն ունեցող երեխաների նկատմամբ, աջակցել նրանց եւ նրանց ընտանիքներին, ինչպես նաեւ վեր հանել կրթության ոլորտում եւ համայնքային կյանքում նրանց ներգրավվածության խնդիրները: «Մենք նախընտրում ենք խնդիրներն արծարծել տարբեր սոցիալական նախաձեռնությունների, արվեստի միջոցով: Իսկ այս նախագծին մասնակցել են հաշմանդամություն ունեցող այն երեխաներն ու նրանց ծնողները, որոնք բավարար խիզախություն են ունեցել խոսելու իրենց խնդիրների մասին եւ կոչ են անում այլ ծնողներին միանալ իրենց եւ փորձել համատեղ ուժերով փոխել հասարակության վերաբերմունքը»,-շեշտեց Ալեվերտը:

Բեմադրության հեղինակ Գրիգոր Խաչատրյանի համոզմամբ՝ թատրոնը մշտապես մեծ խնդիրներ է վեր հանում: «Հաշմանդամություն ունեցող մարդկանց առնչվող մի շարք պրոբլեմներ աշխարհում վաղուց լուծված են, սակայն մեզ մոտ դեռ այդպես չէ, ինչը ցավալի է: Վերջին պատերազմից հետո հաշմանդամություն ունեցող մարդկանց թիվը մեծացել է, եւ մենք պարտավոր ենք ուշադիր լինել, արագ արձագանքել նրանց, որ մեր երկիրը, քաղաքը նպաստավոր պայմաններ ստեղծեն նրանց հեշտ տեղաշարժման համար»,-նշեց Խաչատրյանը:

Ներկայացումը պատրաստելուց առաջ ստեղծագործական թիմի նկարահանող խումբը զրուցել է հաշմանդամություն ունեցողների, նրանց ծնողների հետ եւ պատրաստել է «Յուրահատուկները» վավերագրական ֆիլմը, որի մի հատված ցուցադրվեց մինչ բեմադրության սկիզբը:

«Պարային ներկայացումը ստեղծվել է այդ պատմությունների հիման վրա. ընտրվել է 9 պատմություն: Դերասանուհի Էմմա Մանուկյանի հետ մշակել ենք տեքստն ու գեղարվեստորեն այն մատուցել: «Մենք կանք...» նշանակում է, որ մենք երբեք չպետք է մոռանանք, որ մենք կանք, կան նաեւ հաշմանդամություն ունեցող մարդիկ, որոնք ոչնչով չեն տարբերվում մեզնից: Նրանք երբեք չպետք է մտածեն, որ ամեն ինչ վերջացած է»,- ընդգծեց ռեժիսորը:

Խաչատրյանն առաջին անգամ է այս թեմային անդրադառնում, սակայն միշտ ձգտում է արվեստի լեզվով խոսել սոցիալական խնդիրների մասին:

Ներկայացման խորեոգրաֆներն են Արման Ջուլհակյանն ու Արա Ասատուրյանը:

«ՎՏԲ-ՀԱՅԱՍՏԱՆ» ԲԱՆԿ

ՌՈՒՍԱՍՏԱՆԻՑ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐ՝ ՀԵՌԱԽՈՍԱՀԱՄԱՐՈՎ

«ՎՏԲ-Հայաստան» բանկի ֆիզիկական անձ-հաճախորդները ռուսաստանյան «ՎՏԲ» բանկի հաճախորդներից կկարողանան ակնթարթորեն ստանալ գումարներ ՀՀ դրամով իրենց հաշվին կամ քարտին՝ տրամադրելով ուղարկողին միայն բջջային հեռախոսահամար: Միջազգային փոխանցումները դեռի բարեկամ երկրներ հասանելի են ՎՏԲ Онлайн հավելվածի սեփական ծառայությունում: Հայաստանը դարձավ առաջին երկիրը, որտեղ մեկնարկեց նոր ծառայությունը:

Փոխանցումն ուղարկվում է ֆիզիկական անձ հաճախորդի՝ «ՎՏԲ» բանկում ռուսական ռուբլով բացված հաշվից: Ստացողի քարտին կամ հաշվին գումարը մուտքագրվում է անմիջապես ՀՀ դրամով: Փոխարկումն ազգային արժույթի հաշվարկվում է փոխանցումը կատարելու պահին եւ հաստատվում փոխանցման պահին «ՎՏԲ-Հայաստան» բանկում գործող փոխարժեքով: Մինչեւ փոխանցման հաստատվելը ուղարկողը նախապես տեսնում է վճարման արժույթով փոխանցվող գումարը, ինչպես նաեւ գանձվող միջնորդավճարի չափը:

««ՎՏԲ-Հայաստան» բանկի հաճախորդների համար չափազանց կարեւոր է միջազգային փոխանցումների հասանելիությունը, քանի որ պատմականորեն երկրի մեծ թվով բնակիչներ ապրում եւ աշխատում են Ռուսաստանում, որոնք սովոր են ակնթարթորեն միջոցներ փոխանցել իրենց մտերիմներին: «ՎՏԲ»-ի նոր ծառայությունը՝ գումարի փոխանցում բջջային համարով, զգալիորեն կհեշտացնի այս գործընթացը, ընդ որում՝ փոխանցման գումարն անմիջապես փոխարկվում է ՀՀ դրամի, ինչը շատ հարմար է»,- մեկնաբանեց «ՎՏԲ-Հայաստան» բանկի գլխավոր տնօրենի-տնօրինության նախագահի տեղակալ Անդրեյ Պրոնինը:

Գործարքն իրականացնելու համար ռուսաստանյան ՎՏԲ Онлайн հավելվածի օգտատիրոջն անհրաժեշտ է անցնել Платежи բաժին, ընտրել В валюте за рубеж и по РФ գործարքը եւ երկիրը, այնուհետեւ՝ По номеру телефона տարբերակը: Ապա անհրաժեշտ է որպես ստացող բանկ ընտրել «ՎՏԲ-Հայաստան» բանկը, մուտքագրել անհրաժեշտ տվյալները՝ստացողի հեռախոսահամար եւ գումար, ինչպես նաեւ հաստատել միջնորդավճարի չափը եւ կատարել փոխանցումը: Միջոցներն ակնթարթորեն կմուտքագրվեն ստացողի հաշվին:

Փոխանցման օրական առավելագույն գումարը կազմում է 50 հազար ՌԴ ռուբլի, ամսական գումարը՝ 300 հազար ՌԴ ռուբլի: Միջնորդավճարը կազմում է փոխանցվող գումարի 1%-ը: Ծառայությունը հասանելի է ՎՏԲ Онлайн հավելվածում Android սարքերի համար եւ «Ինտերնետ բանկ» համակարգում:

Ավելի վաղ «ՎՏԲ»-ն մեկնարկել էր բանկային տվյալների միջոցով դրամական փոխանցումներ ազգային արժույթով դեպի ասիական եւ հարեւան երկրներ, այդ թվում՝ դեպի Հայաստան: Դրա համար ՎՏԲ Онлайн հավելվածի օգտատերը պետք է նշի միայն ստացողի քարտի համարը եւ ԱԱՀ-ն՝չծախսելով լրացուցիչ ժամանակ հաշվի ամբողջական տվյալները լրացնելու վրա:

«ՎՏԲ-Հայաստան» բանկը վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից:

ԼՈՒՐԵՐ

ՆՈՐ ԵՐԳ

Երգչուհի Սիլվա Հակոբյանն իր ինստագրամյան էջում նոր հրապարակում է արել՝ ներկայացնելով նոր երգից ու տեսահոլովակից մի հատված:

«Սիրահարվել եմ». այսպես է կոչվում Սիլվա Հակոբյանի նոր երգը, որը ամերիկաբնակ երգիչ Աղասիի հետ զուգերգ է:

Երգի պրեմիերան կայանալու է հոկտեմբերի 28-ին:

Ավելի վաղ երգչուհին տեսանյութ էր հրապարակել՝ցույց տալով, թե ինչպես են ընտանիքի անդամները շնորհավորել ծննդյան 34-րդ տարեդարձը: «Ահա այսպես հարազատներս շնորհավորեցին ինձ կեսգիշերին: Ով կմտածեր, որ 34-ամյակս կնշեմ արդեն երկու բալիկներիս հետ: Շնորհակալ եմ Աստծուն այն ամենի համար, ինչ ունեմ», - տեսանյութին կից գրել էր երգչուհին:

«ՍՊԱՍՈՒՄ Է ՀՐԱՎԵՐԻ»

Աշխարհի ու Եվրոպայի չեմպիոն, Բելգիայի հավաքականի երկրորդ մարզիչ, ֆրանսիացի Թիերի Անրին քիչ հավանական է համարում Թուրինի «Յուվենտուսի» գլխավոր մարզիչի պաշտոնում ֆրանսիացի Զինեդին Զիդանի նշանակումը:

«Զիդանին շատ թիմերի հետ են կապել, բայց երբեք այդ տեղեկությունը իրականություն չի դարձել: Չեմ կարծում, թե Զիդանը կցանկանա գլխավորել «Յուվենտուսը»: Ես տեսնում եմ, որ Զիդանը սպասում է հրավերի Ֆրանսիայի հավաքականից, եւ դրա մեջ կա իմաստ»,- ասել է Անրին:

«Յուվենտուսը» դժգոհ է իտալացի գլխավոր մարզիչ Մասիմիլիանո Ալեգրիի աշխատանքից եւ փնտրում է փոխարինողի:

«Յուվենտուսը» զրկվել է Չեմպիոնների լիգայի փլեյ-օֆֆ դուրս գալու հնարավորությունից, Իտալիայի առաջնության 11 խաղում վաստակել է 19 միավոր եւ 8-րդն է:

5 ՄԱՄՆԱԿԻՑ

Վրաստանի Գորի քաղաքում ուսումնամարզական հավաքն ավարտել է մինչեւ 23 տարեկան ձյուդոիստների Հայաստանի հավաքականը, որը գլխավոր մարզիչ Հովհաննես Դավթյանի ղեկավարությամբ մեկնել է Բոսնիա եւ Հերցեգովինայի մայրաքաղաք Սարաեւո:

Այնտեղ հոկտեմբերի 27-ին կմեկնարկի Եվրոպայի առաջնությունը: Հայաստանը կներկայացնեն Երվանդ Ներսեսյանը (60 կգ), Ստյոպա Դարբինյանը, Արտյոմ Ղալաչյանը (երկուսն էլ՝66 կգ), Արտակ Թորոսյանը եւ Արսեն Ավեդիսյանը (երկուսն էլ՝ 73 կգ):

Առաջնությունը կավարտվի հոկտեմբերի 29-ին:

● Հոկտեմբերի 29-ին Գ. Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնում տեղի կունենա «Գուռամ Ամարյան» սթենդափը: Տոմսերի արժեքը՝3000-18000 դրամ: Սկիզբը՝ժամը 19:00-ին:

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ՔՐԵԱԿԱՆ

ՀԱՐՑ. Որո՞նք են քննչական եւ դատական գործողությունների արձանագրությունները:

Հուսիկ Կիրակոսյան (41 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Քննչական եւ դատական գործողությունների արձանագրությունները սույն օրենսգրքով նախատեսված գրավոր կազմված փաստաթղթեր են, որոնք հաստատում են քրեական վարույթն իրականացնող մարմնի կողմից անմիջականորեն ընկալված, քրեական գործի համար նշանակություն ունեցող հանգամանքները: Որպես ապացույց կարող են օգտագործվել նաեւ կատարված կամ նախապատրաստվող հանցագործությունների վերաբերյալ ընդունված բանավոր հայտարարությունների, մեղայականով ներկայանալու, ձերբակալման, անձանց իրավունքների եւ պարտականությունների պարզաբանման առիթով կազմված արձանագրությունները:

ՀՀ քննչական կոմիտե

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Քննչական գործողության արձանագրության ոչ լրիվությունը չի կարող մեղադրանքի նպատակներով լրացվել հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի, ինչպես նաեւ ընթերակայի եւ այլ անձանց ցուցմունքներով:

Էջը՝ ՌՈԶԱ ՊՈՂՈՍՅԱՆԻ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Ի՞նչ կարգով է կատարվում երեխայի՝ առանց ծնողների համաձայնության որդեգրումը:

Սուրեն Դարիբյան (32 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Երեխային որդեգրելու համար նրա ծնողների համաձայնությունը չի պահանջվում այն դեպքերում, երբ՝

ա) նրանք անհայտ են, կամ դատարանը ճանաչել է անհայտ բացակայող,

բ) դատարանը նրանց ճանաչել է անգործունակ,

գ) դատարանը նրանց զրկել է ծնողական իրավունքներից,

դ) նրանք դատարանով անհարգելի ճանաչված պատճառներով մեկ տարուց ավելի երեխայի հետ համատեղ չեն ապրում եւ խուսափում են նրան դաստիարակելուց ու պահելուց:

ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Տասը տարին լրացած երեխայի որդեգրման համար անհրաժեշտ է նրա համաձայնությունը: Եթե մինչեւ որդեգրման համար դիմում տալը երեխան ապրել է որդեգրողի ընտանիքում եւ նրան համարում է իր ծնողը, ապա որդեգրումը բացառության կարգով կարող է կատարվել առանց որդեգրվող երեխայի համաձայնությունը ստանալու:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարն արվում է Երեւանում

Էջմիածնի բժշկական կենտրոնում ծնվել է արցախյան 44-օրյա պատերազմում զոհված Ավետիք Կարճիկյանի եղբայրը, ում անվանակոչել են Ավետ:

«Ընտանիքիս համար կյանքը նոր իմաստ է ստացել»,- ասել է Ավետիք Կարճիկյանի մայրը՝ Անժելա Եղիազարյանը:

Նշենք, որ փոքրիկ Ավետը լույս աշխարհ է եկել փոխնակ մոր օգնությամբ:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. «Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **26.10.2022**
Հասցեն՝ Գերարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Համբարձումյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: